«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

24 նոյեմբերի, 2026 թ. N 25 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2027 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 2–րդ մասի 5-րդ կետը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 8.1.7 կետը, ՀՀ ֆինանսների նախարարի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» 07.10.2022թ N 420-Ն հրամանը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության կողմից 2027 թվականի աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման (այսուհետ՝ Արտաքին գնահատում) ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը և արտաքին գնահատման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Պալատի գործադիր տնօրինությանը Արտաքին գնահատումը կազմակերպել սահմանված ժամանակացույցի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2026 թ. նոյեմբերի 24-ի N 25 - Լ որոշման

Հ/Հ	**ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ**	**ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՄԻՍ**
1.	«Քրոու Արմենիա» ՍՊԸ	Ապրիլ
2.	«Մուռ Հայաստան» ՍՊԸ	Մայիս
3.	«Ալֆա Աուդիտ» ՍՊԸ	Հունիս
4.	«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ	Հուլիս
5.	«Էյվի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ	Սեպտեմբեր
6.	«Ջի Էմ Քոնսալթ» ՍՊԸ	Հոկտեմբեր
7.	«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ	Նոյեմբեր
8.	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	Դեկտեմբեր